

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/8**

**1 մարտի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Մելա Պետրոսյանի գանգատը թյուրիմացաբար հսկիչ-դրամարկղային մեքենա մուտքագրված գումարներն իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ չներառելու վերաբերյալ:

#### **Ա/Ձ Մելա Պետրոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Մելա Պետրոսյանը հայտնում է, պետական գրանցում է ստացել 12.05.2009-ին և գործունեություն ծավալել ք.Արթիկ, Անկախության 36/2 հասցեում:

2012թ-ին ներկայացրել է ֆիզիկական անձի տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկներ և ԱՁ-ի նոտարի պարտադիր սոց. վճարի տարեկան եկամուտների հայտարարագրեր, 2013–2015թթ-ին համարվել է շրջանառության հարկ վճարող:

12.01.2016թ-ին Գյումրու ՏՀՏ-ի կողմից 31300517 գրանցման համարի ՀԴՄ-ն գրանցումից հանելու ժամանակ պարզվել է, որ 08.05.2012թ-ին ՀԴՄ օրական ընդհանուր գումարը կազմել է, 1.900.014.500 դրամ, սակայն օրական մարումի թիվ 0013 կտրոնով երևում է 14.500 դրամ: 2013թ-ի 3-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը կազմել է 82.883.070 դրամ, որն իրատեսական չէ:

ՏՀՏ-ում գանգատաբերին պարզաբանել են, որ դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում պետք էր սխալ գրանցված գումարի արձանագրման ամսի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ ՏՀՏ ներկայացնել տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանք:

Քանի որ նշված փաստի մասին իր անիրազեկության պատճառով տեղեկացել է ավելի քան երկու տարի անց և հնարավորություն չի ունեցել օրենքի սահմաններում Գյումրու ՏՀՏ ներկայացնել չեղյալ համարման վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանք, գանգատաբերը խնդրում է սխալ մուտքագրված 1.900.014.500 դրամ և 82.883.070 դրամ գումարները ելքագրել:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Մելա Պետրոսյանը (ՀՎՀՀ՝ 61704408) Շիրակի մարզ, ք.Արթիկ, Անկախության 36/2 հասցեում գբաղվել է մանրածախ առևտրով: 12.01.2016թ-ին Ա/Ձ Մելա Պետրոսյանը դիմել է ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ հսկիչ-դրամարկղային մեքենան հաշվառումից հանելու համար (գրանցման համար՝ 31300517): ՀԴՄ-ն հաշվառումից հանելու ընթացքում պարզվել է, որ 2013թ. II եռամսյակում ՀԴՄ է մուտքագրվել 82.883.070 դրամ, իսկ 2012թ.-ի մայիս ամսին՝ 1.900.250.735 դրամ, և ՀՀ կառավարության 26.03.2015թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն սահմանված ժամկետում չի ներկայացրել յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ,

յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը:

ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Մելա Պետրոսյանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգը:

Միննույն ժամանակ, Ա/Ձ Մելա Պետրոսյանի կողմից շահագործվող ՀԴՄ, համապատասխանաբար՝ 2013թ. 2-րդ եռամսյակում 82.883.070 դրամ և 2012թ-ի մայիս ամսին 1.900.250.735 դրամ գումարները սխալմամբ (թյուրիմացաբար) մուտքագրված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ նրա միջին ամսական հասույթը կազմել է 600.000-ից 670.000 դրամ, իսկ խանութի սպասարկման մակերեսը՝ 30 մ<sup>2</sup>: Ընդ որում հարկ է նշել նաև, որ Ա/Ձ Մելա Պետրոսյանը 24.11.2015թ-ին լուծարվել է:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Մելա Պետրոսյանի կողմից շահագործվող ՀԴՄ վերագրյալ գումարները մուտքագրվել են թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես դրանք չեն կարող ներառվել Ա/Ձ Մելա Պետրոսյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Մելա Պետրոսյանի գանգատը՝ թյուրիմացաբար հսկիչ-դրամարկղային մեքենա մուտքագրված գումարներն իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ չներառելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ